Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների բնագավառում համագործակցությունը ներկայումս կանոնակարգվում է 1995 թվականի ապրիլի 10-ին Սոֆիա քաղաքում կնքված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բուլղարիայի Հանրապետության Կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին» համաձայնագրով:

Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև երկու երկրների միջև և իրենց տարածքներով տարանցիկ ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների զարգացման նպատակով վերանայվել են գործող կարգավորումները և 2019թ. հոկտեմբերի 28-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև ավտոմոբիլային միջազգային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» նոր համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), ինչը կնպաստի երկու երկրների միջև փոխշահավետ տնտեսական և գործարար կապերի խթանմանը:

Համաձայնագրով հստակեցվել են երկու երկրների միջև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման գործընթացները, հիմնական պահպանվել են գործող Համաձայնագրի հիմնական սկզբունքները:

Համաձայնագրով նախատեսված դրույթները համապատասխանում են ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների միջազգային համաձայնագրերով և պայմանավորվող կողմ պետությունների օրենսդրություններով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նպատակահարմար է համարում Համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը:

Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար Ս.Պապիկյան